

ՍԱԲԻՆԱ ՄԱԴՈՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ

ՏԱՐԱԾՔԻ ԶԻՉՈՒՄԸ ԺԱՍՏԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՔՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է ժամանակակից միջազգային իրավունքում տարածքներ գիշելու (ցեսիայի) խնայութությունների, վերջինիս դերի ու նշանակության բացահայտմանը ժամանակակից միջազգային իրավակարգի պայմաններում։ Վերլուծելով տարածքային փոփոխությունների հետ կապված պետությունների պրակտիկան, միջազգային դատարանների իրավական դիրքորոշումները և արդի տարածքային վեճերի առանձնահատկությունները, հեղինակը եզրակացնում է, որ տարածքի գիշումը, որպես տարածքային փոփոխությունների հիմք, ՍԱԿ-ի հիմնադրումից ի վեր չոնի եական դերակատարություն, սակայն, փոխանակածայնեցված ցեսիան լուրջ նշանակություն կարող է ունենալ նաև ներկայում։

Հիմնարարեր՝ ժամանակակից միջազգային իրավունք, ցեսիա, տարածքներ գիշել, արդի տարածքային վեճեր, ՍԱԿ-ի միջազգային դատարան։

Տարածքային փոփոխություններին վերաբերող հարցերը պատմության ողջ ընթացքում դասվել են միջազգային հարաբերությունների առավել բարդ և վիճահարույց խնդիրների թվին, քանի որ տարածքը ոչ միայն պետության առանցքային հատկանիշներից է, այլ նաև նրա ինքնիշխանության և հզորության կարևորագույն գրավականը։

Զիջումը (ցեսիան) միջազգային համաձայնագրի ուժով տարածքի անցումն է մեկ պետությունից մյուսին։ Ցեսիան՝ որպես տարածքի նկատմամբ տիտղոսի ձեռք բերման հիմք, գոյություն է ունեցել դարեր շարունակ։ Այստեղ հարկ է նշել, որ դեռ 20-րդ դարի սկզբում պատերազմը համարվում էր պետությունների ինքնիշխան իրավունքը և փաստորեն տարածքի նկատմամբ տիտղոսի ձեռքբերման արդյունավետ եղանակներից մեկը. դասական միջազգային իրավունքում ցեսիան համարվում էր խաղաղության պայմանագրերի անօտարելի մաս, երբ պատերազմում պարտություն կրած պետությունը հարկադրված էր գիշել տարածքներ։ Ժամանակակից միջազգային իրավունքը, սակայն, արգելում է պատերազմը՝ որպես տարածքի նկատմամբ տիտղոսի ձեռքբերման հիմք¹։ Այսպես՝ Միջազգային հարաբերություններում ուժի սպառնալիքից կամ ուժի գործադրումից հրաժարվելով վերաբերյալ սկզբունքի արդյունավետության բարձրացման վերաբերյալ 1987թ. հոչակագրի համաձայն. «ոչ ուժի սպառնալիքով կամ դրա կիրառմամբ տարածքային ձեռքբերումները և ոչ էլ տարածքի բռնազավումն ուժի սպառնալիքով կամ գործադրմամբ, որ տեղի են ունենում՝ խախտելով միջազգային իրավունքը, չեն ճանաչվի օրինական ձեռքբերումներ»²։

Միջազգային իրավունքը ցեսիայի իրակա-

նացման որևէ կոնկրետ ձև չի սահմանում, սակայն ակնհայտ է, որ ցեսիան կարող է և պետք է տեղի ունենա միջմայն ներգրավված պետությունների իշխանությունների լիակատար համաձայնությամբ։ Բացի այդ, ցեսիան ձեռք է բերում իրավաբանական ուժ՝ միայն տարածքը փաստացի փոխանցելով, երբ վերանում է տվյալ տարածքի և ցեսիա իրականացնող (գիշող) պետության միջև քաղաքական կապը։

Եթե խոսում ենք միջազգային համաձայնագրի միջոցով տարածքը գիշելու մասին, խորը միայն գրավոր պայմանագրերի մասին չէ։ Այսպես, ինչպես նշվել է՝ միջազգային համաձայնությունը կարող է արտահայտվել նաև բանավոր, քանի որ միջազգային իրավունքը ելակետային է համարում պետությունների մտադրությունը, կամքը (intention), այլ ոչ դրա արտահայտման ձևը։ Ավելին՝ այն չի սահմանում մտադրության, կամքի արտահայտման կոնկրետ ձևեր։ պետություններն ազատ են ընտրելու դրա դրսուրման ձևը՝ պայմանով, որ կամարտահայտությունը լինի ակնհայտ³։ Իսկ ահա, Պեղրա Բրանկա/Պուլաու Բատու Պուտեհ կղզյակի, Սիջանկայալ ժայռերի և Հարավային ստորջրյա ժայռի նկատմամբ ինքնիշխանության վերաբերյալ գործում՝ Միջազգային դատարանը հստակորեն նշեց, որ տարածքը գիշելու վերաբերյալ պետության համաձայնությունը կարող է լինել նաև բանավոր⁴, սակայն, դա պետք է լինի իրապարակային և աներկրա:

Այս առումով հետաքրքրական է Բոլիվիայի և Չիլիի միջև վեճը, որը 2013թ. ապրիլին Բոլիվիան հանձնեց ՍԱԿ-ի Միջազգային դատարանի քննությանը⁵։ 1879թ. Չիլին բռնազավել էր Բոլիվիայի տարածքի մի մասը՝ զրկելով նրան Խաղաղ օվկիա-

նոս ելքից: 1904թ. Բոլիվիան և Չիլին ստորագրել են պայմանագիր, որի համաձայն՝ Բոլիվիան ճանաչեց Չիլիի ինքիշխանությունը բռնազավթած տարածքների նկատմամբ: Հետագա տարիներին, սակայն, Բոլիվիան մշտապես հարց էր բարձրացրում Չիլիի կողմից Բոլիվիային Խաղաղ օվկիանոս ելք տրամադրելու վերաբերյալ: Չիլիի պաշտոնյաներն ել խոստանում էին հարցին լուծում տալու որևէ բանաձև գտնել, սակայն հարցն անընդհատ ձգձգվում էր: Ավելին՝ 2011թ. Բոլիվիայի նախագահի կոկին հնչեցրած պահանջներին ի պատասխան՝ Չիլին հայտարարեց, որ Բոլիվիան որևէ իրավական հիմք չունի՝ դեպի Խաղաղ օվկիանոս ելք պահանջելու համար, և ինքը որևէ տարածք չի գիշելու նրան: Հակառակ Չիլիի, սակայն, Բոլիվիան պնդում է, որ Չիլին պարտավոր է բանակցել այս հարցի շուրջ և ելք գիշել դեպի Խաղաղ օվկիանոս. այդ պարտականությունը, ըստ Բոլիվիայի, բազմից հաստատել են Չիլիի՝ տարբեր տարիների պաշտոնյաներ: Այսպես, Բոլիվիան պնդում է, որ դեպի օվկիանոս ելքի բացակայությունը լուրջ խոչընդոտ է իր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման համար. Բոլիվիան կտրված է առևտրային կարևոր ուղիներից, մշտապես կախվածության մեջ է ծովեզր ունեցող պետություններից: Թե արդյո՞ք Դատարանը կճանաչի Չիլիի պարտականությունը՝ բանակցելու Բոլիվիային հետ այդ հարցի շուրջ, ցոյց կտա ժամանակը: Դիմելով Սիհազային դատարան՝ Բոլիվիան հույս ունի ի վերջո հասնելու արդարության և վերադարձնելու շուրջ 140 տարի առաջ կորցրած ծովեզրյա հատվածը: 2015թ. մայիսի 4-ին Դատարանը սկսեց այս գործի լումները:

Հարկ է նշել, որ միջազգային դատական պրակտիկայում ցեսիայի շուրջ վեճերը հիմնականում վերաբերում են տարածքը փոխանցող պետության տիտղոսին և ցեսիայի հիմքում ընկած միջազգային պայմանագրի իրավաբանական ուժի հիմնավորվածությանը: Մասնավորապես, սովորության միջազգային իրավունքի համաձայն՝ պետությունները կարող են փոխանցել կամ գիշել միայն այն տարածքը, որի նկատմամբ իրենք ունեն լիարժեք տիտղոս (good title): Այս սկզբունքը միջազգային իրավունքում հայտնի է *nemo dat quod non habet* (լատ.) ոչ ոք չի կարող տալ ավելին, քան ունի):

Այսպես օրինակ՝ Պալմաների (Սիանգա) կղզու վերաբերյալ գործում անդրադանալով ԱՄՆ-ի այն պնդմանը, թե տիտղոսը կղզու նկատմամբ անցել էր ԱՄՆ-ին 1898թ. Փարիզի պայմանագրի ուժով, որի համաձայն Խապանիան այն գիշել էր ԱՄՆ-ին, հատուկ արքիտրը նշեց. «Անհայտ է, որ Խապանիան չէր կարող փոխանցել ավելի շատ

իրավունքներ, քան ինքն ուներ⁷»: Այսինքն, թեև դասական միջազգային իրավունքը չէր բացառում պատերազմը՝ որպես տարածքի նկատմամբ տիտղոս ձեռք բերելու օրինական հիմք, ինչպես նաև չէր բացառում հարկադրանքի միջոցով ցեսիայի պայմանագրերի կնքումը, սակայն տարածքը գիշել կարող էր միայն այն պետությունը, որը տվյալ տարածքի օրինական ինքիշխանն էր:

Ինչ վերաբերում է արդի ժամանակաշրջանին, տեսականորեն, իհարկե, հնարավոր է ենթադրել, որ տարածքը հնարավոր է գիշել որևէ միջազգային պարտավորության խախտման դիմաց, սակայն հաշվի առնելով այն, որ միջազգային իրավունքն արգելում է հարկադրանքի միջոցով միջազգային պայմանագրերի կնքումը, հետևաբար, հարկադրանքի միջոցով ցեսիայի պայմանագրերի կնքումն ինքնըստինքյան բացառված է: Այդ իսկ պատճառով ներկայում ցեսիան՝ որպես տարածքային փոփոխությունների հիմք, էական դերակատարություն չունի. 1945թ. ՄԱԿ-ի հիմնադրումից հետո՝ ցեսիայի դեպքերը սակավարիվ են, և այդ խնդրի ուսումնասիրությունը ցոյց է տալիս, որ դրանք, որպես կանոն, վերաբերում են կամ սահմանների հստակեցմանը, կամ սահմանամերձ ոչ մեծ տարածքների գիշմանը⁹: Օրինակ՝ 1961թ. Չինաստանը Էվերեստ լեռնազագարին հարող տարածքի ոչ մեծ հատվածը գիշեց Նեպալին, սակայն այս դեպքը, կարելի է ասել, ևս վերաբերում էր այս երկու պետությունների միջև սահմանների հստակեցմանը¹⁰: Տարածքային փոփոխությունների վիճակագրական տվյալների ուսումնափրությունից երևում է, որ 1945թ.-ից ի վեր հնարավոր չէ գտնել համեմատաբար մեծ կամ էական տարածքների գիշման դեպքեր¹¹: Սա բացատրվում է նրանով, որ պետության ուժը և հզորությունը հիմնականում պայմանավորված են նրա աշխարհագրական դիրքից, տարածքի չափերից, բնակչության քանակից, բնական ռեսուրսների ծավալից, բանակի պոտենցիալ հնարավորություններից, տնտեսական զարգացման աստիճանից և շատ այլ գործուներից: Հետևաբար պետությունները ամեն կերպ խուսափում են տարածքային գիշումներից:

Այս առումով կարելի է անդրադանալ նախկին հարավարական հանրապետություններ Խորվաթիայի և Մոնտենեգրոյի միջև տարածքային վեճին Պրևակա թերակղու շուրջ: Այս պատճեռությունը սկսվում է 1991թ., երբ Խորվաթիան հռչակեց անկախություն և դուրս եկավ Հարավարակայի կազմից¹²: Մոնտենեգրոն անկախացավ միայն 2006թ., այնպես որ մինչև 2006թ. այս վեճը պաշտոնապես Խորվաթիայի և Հարավարակայի միջև էր:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Խորվաթիան թերակղզին համարում էր իր ինքիշխան տարածքը, իսկ Հարավլավիան վիճարկում էր թերակղզու տարածքում գտնվող ռազմաբազայի պատկանելիությունը: 1992թ. հարավլավիան զինվորականները հեռացան թերակղզուց, և այդ թվականի հոկտեմբերից թերակղզու անվտանգության պատասխանատվությունը ամբողջությամբ ստանձնեց ՍՍԿ-ի Անվտանգության խորհրդի ռազմադիտորդական առաքելությունը՝ համաձայն Անվտանգության խորհրդի 779 (1992) բանաձիկ:

Բանակցությունների ընթացքում Հարավլավիան Պրկարակայի փոխարեն Խորվաթիային առաջարկում էր այլ տարածքներ, քանզի թերակղզին կարևոր ռազմավարական նշանակություն ուներ իր համար, սակայն Խորվաթիան մերժեց տարածքը զիջելու կամ այլ տարածքով փոխարինելու որևէ տարրերակ: Այսուհետև 1999թ. բանակցային գործընթացը ընդիմատվեց՝ Հյուսիսաւանատյան դաշինքի (NATO) կողմից Հարավլավիայի տարածքը ոմբակոծելու հետևանքով¹³:

2002թ. ստորագրվեց արձանագրություն Պրկարական թերակղզու ժամանակավոր ռեժիմի վերաբերյալ, որի համաձայն էլ ավարտվեց ՍՍԿ-ի դիտորդական առաքելությունը¹⁴: Միևնույն ժամանակ, քանզի Խորվաթիան 2013թ.-ից Եվրոպական միության անդամ է, իսկ Մոնտենեգրոն՝ 2010թ.-ից Եվրոպական միության անդամակցության թեկնածու, Եվրոպական հանձնաժողովը պահանջում է կողմերից թերակղզու շուրջ վեճը հանձնել ՍՍԿ-ի Միջազգային դատարանի քննությանը¹⁵: Սակայն, այս վեճը կողմերը ցայսօր չեն հանձնել Դատարանի քննությանը՝ հավանաբար շարունակելով լուծումը փնտրել բանակցությունների ճանապարհով: Թեև ակնհայտ է, որ Խորվաթիայի չցանկանալը դիմել տարածքային զիջումների, այսինքն՝ ցեսիայի, վեճի նման հանգուցալուման հնարավորությունը գրեթե բացառում է: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այս վեճի առաձնահատկությունը այն է, որ, ի տարբերություն շատ այլ տարածքային վեճերի, չնայած բանակցային գործընթացի դժվարություններին և տարածայնություններին, կողմերին հաջողվեց պահպանել բարիդրացիական հարաբերությունները և վերականգնել փոխվստահության մքնողը¹⁶:

Այսպիսով, կարելի է նշել, որ ցեսիան կամ տարածքի զիջումը՝ որպես տարածքային փոփոխությունների հիմք, ՍՍԿ-ի հիմնադրումից ի վեր, չունի որևէ էական նշանակություն և վերաբերում է կամ սահմանների հստակեցմանը, կամ սահմանամերձ ոչ մեծ տարածքներ զիջելուն: Թեև խնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածքային վե-

ճերը անցյալի երևոյթ չեն: Ավելին, ըստ տարրեր հեղինակների՝ ցամաքային սահմանների մոտավորապես քառորդ մասը, իսկ ծովային՝ երկու երրորդը, համարվում են վիճելի: Այդ իսկ պատճառով փոխամածայնեցված ցեսիան շատ լուրջ նշանակություն կարող է ունենալ նաև ներկայումս: Մասնավորպես՝ վեճի կողմերը կարող են ձեռք բերել համաձայնություն տարածքի զիջման դիմաց փոխատուցումների շուրջ, և պարտադիր չե, որ այդ փոխատուցումները լինեն տարածքային: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, այդ փոխատուցումները կարող են լինել տնտեսական, քաղաքական ճանաչում, դիվանագիտական կապերի, խաղաղության և անվտանգության հաստատում, կամ վերաբերեն անվտանգության ոլորտին՝ տարածքի չեղոքացում, ապարագմականացում, ռազմական համագործարցություն և այլ¹⁸:

Փոխամածայնեցված ցեսիայի օրինակ կարելի է համարել Պանամայի ջրանցքի վերաբերյալ պայմանագրի վերանայումը 1977թ. և ջրանցքի վերաբերածնելը Պանամայի ինքնիշխանությանը 2000թ.: Այսպես՝ Պանամայի ջրանցքի վերաբերյալ 1903թ. պայմանագրի համաձայն. «....Պանաման փոխանցում է ջրանցքի տարածքը Միացյալ նահանգների անժամկետ տիրապետությանը,ԱՍՆ-ը իրավունք ունի տնօրինել այս տարածքը և տիրապետել այն՝ որպես տարածքի ինքնիշխան»: Սա իհարկե տարածքի վարձակալության պայմանագիր էր, ու տարածքի օտարման համար ԱՍՆ-ը վճարեց Պանամային 10 մլն. և 250 հազար դոլար էլ վճարում էր տարեկան: Սակայն, «հավերժ» ու «փնքնիշխան» եզրույթների օգտագործումը արդեն իսկ վերածում էր վարձակալության պայմանագիրը (de facto) տարածքի զիջման պայմանագրի: Պանաման տասնամյակներ անց ԱՍՆ-ից պահանջեց վերաբերածնել ջրանցքի տարածքը իր ինքնիշխանության ներքո: Ակսվեցին բանակցություններ, որոնց արդյունքում 1977թ. Պանամայի ու ԱՍՆ-ի միջև ստորագրվեցին երկու պայմանագրեր, որոնք հաստատեցին Պանամայի ինքնիշխանությունը Պանամայի ջրանցքի նկատմամբ, ինչպես նաև սահմանեցին Պանամայի ջրանցքի մշտական չեզոք կարգավիճակը և ԱՍՆ-ի իրավունքը՝ Պանամայի հետ մեկտեղ ապահովել ջրանցքի անվտանգությունը¹⁹: Այլ կերպ ասած՝ Պանաման վերաբերածնեց ջրանցքի տարածքը, իսկ ԱՍՆ-ը փոխարեն պահանջեց փոփոխուղղ տարածքի չեղոքացում և իրավունք հետագայում ապահովել տարածքի անվտանգությունը՝ հաստատելով իր մշտական ներկայությունը փոփոխուղղ տարածքում: Փաստորեն, ԱՍՆ-ը զիջեց տարածքը՝ չվտանգելով

իր անվտանգության շահերը՝ միևնույն ժամանակ, բարձրացնելով իր քաղաքականության հեղինակությունը աշխարհում²⁰:

Այսպիսով՝ ինչպես ցոյց է տալիս արդի տարածքային վեճերի ուսումնասիրությունը, տարածքի զիջումը շատ դեպքերում կողմերին հնարավորություն կրնածեներ արդյունավետորեն լուծել տարածքային խնդիրները փոխընդունելի պայմաննե-

րով, ինչը իր հերթին կնպաստեր թե՝ տարածաշրջանային, թե՝ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը և ամրապնդմանը, ինչպես նաև՝ ժողովուրդների միջև բարիքացիական հարաբերությունների ու փոխվստահության վերականգմանը և բարեկավմանը:

¹ Տե՛ս, General Assembly Resolution 42/22. U.N. Doc. A/RES/42/22. 18 November 1987. Annex, Declaration on the Enhancement of the Effectiveness of the Principle of Refraining from the Threat or Use of Force in International Relations, §8: Տեղեկությունը հասանելի է՝ www.un.org կայքում:

² Տե՛ս, General Assembly Resolution 42/22. U.N. Doc. A/RES/42/22. 18 November 1987. Annex, Declaration on the Enhancement of the Effectiveness of the Principle of Refraining from the Threat or Use of Force in International Relations, §8:

³ Տե՛ս, Case concerning the Temple Preah Vihear (Cambodia v. Thailand), Preliminary Objections // International Court of Justice (1962). Գործի տեքստը հասանելի է՝ <http://www.icj-cij.org/docket/files/45/4871.pdf> կայքում:

⁴ Տե՛ս, Case concerning the Sovereignty over Pedra Branca/Pulau Batu Puteh, Middle Rocks and South Ledge (Malaysia/Singapore) // International Court of Justice (2008) §120: Գործի տեքստը հասանելի է՝ <http://www.icj-cij.org/docket/files/130/14492.pdf> կայքում:

⁵ Բոլիվիան և Չիլին 1948թ. Խաղաղ կարգավորման ամերիկյան պայմանագրի (American Treaty on Pacific Settlement 1948) կողմեր են, որի դրույթների համաձայն՝ բոլոր պայմանավորվող կողմերը ճանաչում են Դատարանի պարտադիր իրավասությունը *ipso facto* առանց հասուն համաձայնագրի անհրաժեշտության, ցանկացած իրավական վեճի նկատմամբ, որ կծագի միմյանց միջև:

⁶ Տե՛ս, Obligation to Negotiate Access to the Pacific Ocean (Bolivia v. Chile), Preliminary objection // International Court of Justice (2015). Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.icj-cij.org/docket/files/153/18746.pdf> կայքում:

⁷ Տե՛ս, Island of Palmas case (The Netherlands/United States of America) // United Nations Reports of International Arbitral Awards, (1928). Գործի տեքստը հասանելի է՝ http://legal.un.org/riaa/cases/vol_II/829-871.pdf կայքում:

⁸ Տե՛ս, Vienna Convention on the Law of Treaties // United Nations Treaty Series, vol. 1155, P. 331, 23 May 1969:

⁹ Տե՛ս, Kasowicz A.M., Peaceful territorial change 1994, էջ 252-301.; Tir J., Redrawing the map to promote peace, 2006, էջ 145-147:

¹⁰ Տե՛ս, Kasowicz A.M., Peaceful territorial change, 1994, էջ 252-301; Tir J., Redrawing the map to promote peace, 2006, էջ 282:

¹¹ Թերևս այս է պատճառը, որ շատ հեղինակներ, անդրադառնալով ցեսիային, քննարկում են վերջինս անցյալի, նույնիսկ հարյուրամյակների վաղեմություն ունեցող զիջման դեպքերի լույսի ներք: Տե՛ս, օրինակ՝ Եկանչև Կ.Ա. Մеждународное право, 5-е изд., 2010, էջ 555:

¹² Տեղեկությունը հասանելի է՝ www.undp.org/missions/croatia կայքում:

¹³ Տե՛ս, Calver R.(, Political Adviser, UN Mission of Observers in Prevlaka (UNMOP)), Peacekeeping that lives up to its name, // United Nations Peace Operations 2001. Տեղեկությունը հասանելի է՝ http://www.un.org/en/peacekeeping/publications/yir/2001/Europe_countries/Prevlaka.htm կայքում:

¹⁴ Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.mip.gov.me/en/index.php/Press-Releases/pr08102012-2.html> կայքում:

¹⁵ Տե՛ս, Commission Opinion on Montenegro's application for membership of the European

Union// European Commission (Brussels, 9.11. 2010). Տեղեկությունը հասանելի է՝ http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2010/package/mn_opinion_2010_en.pdf կայքում:

¹⁶ Տե՛ս, Montenegro 2012 Progress Report// Commission staff working document, European Commission (Brussels, 10.10.2012). Տեղեկությունը հասանելի է՝ http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2012/package/mn_report_2012_en.pdf կայքում:

¹⁷ Տե՛ս, Tir J., Redrawing the map to promote peace, 2006, էջ 46:

¹⁸ Տե՛ս, Kasowicz A.M., Peaceful territorial change 1994, էջ 186:

¹⁹ Պայմանագրերի տեքստերը հասանելի են՝ http://avalon.law.yale.edu/20th_century/pan001.asp կայքում:

²⁰ Տե՛ս, Kasowicz A.M., Peaceful territorial change 1994, էջ 186:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Kasowicz A.M., Peaceful territorial change, University of South Carolina Press, 1994.

ԱՐԴԻՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2. Tir J., Redrawing the map to promote peace, Lexington Books, 2006.
3. Calver R.(, Political Adviser, UN Mission of Observers in Prevlaka (UNMOP)), Peacekeeping that lives up to its name, // United Nations Peace Operations 2001.
4. Бекяшев К.А., Международное право, 5-е изд., 2010.
5. Case concerning the Temple Preah Vihear (Cambodia v. Thailand), Preliminary Objections // International Court of Justice (1962).
6. Case concerning the Sovereignty over Pedra Branca/Pulau Batu Puteh, Middle Rocks and South Ledge (Malaysia/Singapore) // International Court of Justice (2008) §120:
7. Montenegro 2012 Progress Report// Commission staff working document, European Commission (Brussels, 10.10.2012).
8. Commission Opinion on Montenegro's application for membership of the European Union// European Commission (Brussels, 9.11. 2010).
9. Vienna Convention on the Law of Treaties // United Nations Treaty Series, vol. 1155, P. 331, 23 May. 1969.
10. Island of Palmas case (The Netherlands/United States of America) // United Nations Reports of International Arbitral Awards, (1928).
11. Obligation to Negotiate Access to the Pacific Ocean (Bolivia v. Chile),Preliminary objection // International Court of Justice (2015).
12. General Assembly Resolution 42/22. U.N. Doc. A/RES/42/22. 18 November 1987. Annex, Declaration on the Enhancement of the Effectiveness of the Principle of Refraining from the Threat or Use of Force in International Relations, §8:

Сабина Мадоян

Член палаты адвокатов Республики Армения,
Соискатель кафедры европейского и международного
права Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Уступка территории в современном международном праве

Данная статья посвящена изучению института цессии в современном международном праве, раскрытию роли и значения последней в условиях современного международного правопорядка. На основе анализа практики государств, связанной с территориальными изменениями, правовой позиции международных судебных инстанций и характерных особенностей современных территориальных споров автор заключает, что после основания ООН уступка территории как основание для территориальных изменений не играет особой роли, но взаимосогласованная цессия может иметь важное значение и сегодня.

Ключевые слова: современное международное право, цессия, уступка территории, современные территориальные споры, международный суд ООН.

Sabina Madoyan

Member of the chamber of advocates of the RA,
Applicant for PhD Chair of European and
International Law of Yerevan State University

SUMMARY

Cession of territory in modern International Law

The article is dedicated to research of issues with regard of cession in modern International Law as well as the role and meaning of the latter are indicated within the terms of modern international system of justice. On the basis of analysis of legal positions of international court instances, practice of states and outstanding characteristics of modern territorial conflicts, the author comes to the conclusion that after UN foundation the role of cession as a basis for territorial changes is not of importance, but agreed cessions may be of some significance at present.

Keywords: modern International Law, cession of territory, modern territorial conflicts, International Court of Justice.